Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հունիսի 6 -ի N 302 - Ա
որոշման

«ԱՂԲԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻՆ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	Աջակցել Սիսիանի համայնքին իրականացնելու արդյունավետ աղբահանության
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում ՀՀ օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի արտոնություններից
3.	Բարեգործը	ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատուն, հասցեն՝ ՀՀ , քաղ. Երևան, Բաբայան փող., 23/4, 0037
4.	Ծրագիրը կատարողը	«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ (ՈՒՀ), ՀՎՀՀ՝ 01549618, հասցեն՝ Ալեք Մանուկյան 9, 0070 Երևան
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնազավառը	Սյունիքի մարզ, Սիսիանի համայնք, բնազավառը՝ բնապահպանական
6.	Ծրագրի բյուջեն	19914 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Սիսիանի համայնքապետարան, Սյունիքի մարզ, 3501 Սիսիան, Սիսական փող., 31
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	*2019թ. մայիսի 12-ից մինչև օգոստոսի 31-ը*
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Նախատեսվում է աղբամանների ձեռքբերում և տրամադրում Սիսիանի համայնքին: Աղբամանների արժեքը կազմում է 17940 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: Սույն միջոցառումը նախատեսվում է իրականացնել հունիսի 1-ից մինչև օգոստոսի 15-ը: 2. Նախատեսվում է աուդիտորական ծառայությունների ձեռքբերում, որն իրականացվելու է մայիսի 15-ից մինչև օգոստոսի 31-ը: Աուդիտորական ծառայությունների արժեքը կազմում է 1974 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Վենկոն ՍՊԸ-ից ձեռք բերել աղբամաններ 17940 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով: 2. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել աուդիտորական ծառայություններ 1974

		ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աուդիտորական ծառայությունների ձեռքբերում 1974 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպություն-ների հետ	Ծրագրի շրջանակներում առկա է համագործակցություն Միսիանի համայնքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1. Ծրագրային և ֆինանսական հաշվետվությունների ներկայացում՝ համաձայն ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատան և «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի միջև կնքված պայմանագրի պահանջների: 2. ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ